

Արձանագրություն թիվ 3

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

27 հոկտեմբերի 2015թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ա.Ռ.Մելքումյան

Ներկա էին խորհրդի բոլոր 14 անդամները:

Օրակարգ

1. 2015-16 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում:
/զեկ. Ա.Շ.Մարգարյան/
2. Դասավանդման պրոցեսում տեղատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման վիճակի քննարկում:
/զեկ. Ա.Շ.Մարգարյան/
3. 2015-2016 ուս.տարվա ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
/զեկ. Ա.Շ.Մարգարյան/
4. „Համակարգչային գրաֆիկա „ նոր մասնագիտության ուսումնական պլանի քննարկում և հաստատում:/զեկ. Ա.Շ. Մարգարյան/
5. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՅԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:Նա ներկայացրեց 2015-16 թթ. ուստարվա I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները /ամփոփ տվյալները կցվում են արձանագրության տեքստին/: Զեկուցողը անդրադարձավ նաև այն առարկաներին, որոնց միջին առաջադիմությունը ցածր է ֆակուլտետային միջին ցուցանիշից, ինչպես նաև այն առարկաներին, որոնց միջին առաջադիմությունը շատ բարձր է վերջինից:

Ա.Շ.Մարգարյանը հանձնարարեց, ամբիոններին պարզելու այդ ծայրահեղությունների պատճառը և ընթացիկ քննությունների ու ընթացիկ ստուգումների ժամանակ բացառել թերացումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - „Գծանկարի, գունանկարի և քանդակի” ամբիոնի վարիչ Ա.Հ.Միրզոյանը նշեց, որ կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ՝ առաջադիմության միջին ցուցանիշը բարձրացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հանձնարարել ամբիոններին հատուկ ուշադրություն դարձնել տեսական և գործնական նյութի՝ մատուցման որակի ու դասավանդման մեթոդներին երկրորդ ընթացիկ քննություններին և ստուգումներին բարձր արդյունք ապահովելու համար:

2. Հանձնարարել ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացնել առաջարկներ երկրորդ ընթացիկ քննությունների անցկացման ձևի (գրավոր, բանավոր կամ թեստի հետ համակցված տեսական նյութեր) վերաբերյալ:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի դեկան Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց, որ ֆակուլտետում դասավանդող մի խումբ դասախոսներ դասապրոցեսն անց են կացնում տեխնիկական միջոցների զուգակցմամբ և հաճախ օգտվում են բնագիտական ֆակուլտետի համակարգչային սրահներից և 5-րդ լսարանից, որը կահավորվել է հատկապես կիրառական արվեստի ֆակուլտետի դասապրոցեսները կազմակերպելու համար: Բանախոսը նշեց, որ «Արվեստի պատմություն», «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ» , «Էկոլոգիայի բնապահպանության հիմունքներ» և նմանատիպ այլ դասընթացների ժամանակ հաճախակի օգտվում են ընձեռնված հնարավորությունից և խորհուրդ տվեց մնացած դասընթացների իրականացման ժամանակ նույնպես օգտվել դասավանդման ժամանակակից մեթոդներից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - „Գծանկարի, գունանկարի և քանդակի” ամբիոնի ասիստենտ Ս.Թ. Հովհաննիսյանը: Նա կարևորեց դասավանդման օժանդակ և դիդակտիկ պարագաների դերն ու նշանակությունը և փաստեց, որ վերջիններս օգնում են դասավանդողին ավելի “հարուստ” դարձնել դասախոսությունը, իսկ ուսանողներին՝ ավելի դյուրին և ըմբռնելի դարձնել մատուցվող նյութը:

ՈՐՈՇԵՑԻՆ - ֆակուլտետում դասավանդվող բոլոր առարկաների դասախոսներին հանձնարարել հավաքել համապատասխան էլեկտրոնային նյութեր, կազմել ներկայացումներ(պրեզենտացիաներ) և կիրառել դասապրոցեսների ընթացքում:

Օրակարգի երրորդ հարցի մասին տեղեկատվություն տրամադրեց “Կիրառական արվեստ” մասնագիտության պատասխանատու ,ասիստենտ Ա.Լ.Չիբուխյանը: Նա նշեց, որ հարցը բավականին երկար ժամանակ քննարկման փուլում է և ավարտական

աշխատանքների ղեկավարները ուսանողների հետ եկել են ընդհանուր որոշման և ներկայացրել իրենց թեմաները:

ՈՐՈՇԵՑԻՆՆԵՐ՝ Նախնական հաստատել թեմաները՝ 2016թ. փետրվարին վերջնական հաստատելու պայմանով:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ կրկին հանդես եկավ դեկան Ա.Շ. Մարգարյանը: Նա նշեց, որ վերջին երեք տարիների ընթացքում կտրուկ նվազել են <<Կիրառական արվեստ>> մասնագիտության դիմորդների թիվը դպրոցների ավագ դասարաններում անցկացված և հարցման արդյունքները նունպես վկայում են այդ մասին: Փոխարենը տարածաշրջանային աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անհրաժեշտություն կա ունենալ <<Համակարգչային գրաֆիկայի>> մասնագետներ: Այդ առումով հարկ է քննարկել վերոնշյալ մասնագիտության ուսումնական պլանը, որը կազմվել է համապատասխան մասնագետների կողմից և քննարկվել <<Գծանկարի, գունանկարի և քանդակի >> և <<Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի>> ամբիոնների սեպտեմբերի 15-ին կայացած թիվ 2 համատեղ նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆՆԵՐ – ամբիոնի վարիչներ Ա.Միրզոյանը և Մ.Հարությունյանը, որոնք նշեցին , որ հարցը մանրամասն քննարկվել և անհրաժեշտ փոփոխություններ կատարվել են ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական բոլոր առարկայացանկում: Նրանք առաջարկեցին հաստատել <<Համակարգչային գրաֆիկա>> մասնագիտության ուսումնական պլանը և հավաստիացնել տնօրենության՝ իրականացման պատրաստականության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆՆԵՐ-1. Հաստատել <<Համակարգչային գրաֆիկա>> մասնագիտության ուսումնական պլանը:

2. Զեկուցել տնօրենությանը 2016թ. ընդունելության մասնագիտությունների ցանկում ընդգրկված <<Համակարգչային գրաֆիկա>> մասնագիտության ծրագրի իրականացման մասին:

3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին հետևողական լինել առարկայական ծրագրերի կազմման հարցում և կազմակերպել քննարկումներ ու համատեղ նիստեր <<Ծրագրավորում և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ>> ամբիոնի հետ:

Ընթացիկ հարցերից կարևորվեց 2016թ. ամփոփիչ ատեստավորման հարցաշարի քննարկումը: Լ.Լաճիկյանը և Ա.Ուլիխանյանը ներկայացրեցին 60 հարցերից բաղկացած հարցաշարը, որն ընդգրկվում է հայ և արտասահմանյան արվեստների պատմության դասընթացների առանցքային հարցերը: Մասնավորապես նշվեց, որ նախորդ տարիների հարցաշարերից տարբերվում է հայ արվեստի գործիչների և գործերի ավելացումով՝ հատկապես

մեծ տեղ է հատկացվել XX դարի հայ նորագույն արվեստագետների ստեղծագործություններին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- <<Կիրառական արվեստ>> մասնագիտության պատասխանատու Ա. Չիբուխյանը և ուսումնական խորհրդատու Դ.Չիբուխյանը և նշեցին , որ կատարված փոփոխությունները միանշանակ արդարացված են և առաջարկեցին հաստատել ամփոփիչ ատեստավորման հարցաշարը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հաստատել <<Կիրառական արվեստ>> մասնագիտության 2016թ ամփոփիչ ատեստավորման հարցաշարը:

2.Հանձնարարել ուսումնական խորհրդատու Դ.Չիբուխյանին՝ տրամադրել հարցաշարը չորրորդ կուրսի ուսանողներին և կազմել կոնսուլտացիաների գրաֆիկ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Շ.Մարգարյան
Ա.Ռ.Մելքունյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Կիրառական ասպեկտի ֆակուլտետ

2015-2016 ուս.տարի I կիսամյակ

Ա Ր Վ Ք Վ Ր Ի Մ Ք Ր Ո Ւ Ն Ր

ընթ.ստ.1

27.10.2015

N:	Առարկայի անունը	Ուս.քանակ		Միջին գնահ.		0-ների քանակ		8,7,8-երի քան.		9-երի քանակ	
		ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.
Դիզայն (գեղար)											
<i>Կուրս Դ I</i>											
1	Մասնագիտական ներածություն	11	3	7,45	8,00			10	3		
<i>Կուրս Դ II</i>											
1	Երթապատի դիզայն-1	11	3	7,82	8,00			9	2	2	1
ԸՆԴՀԱՄԵՆՆԵՐ՝ Դիզայն (գեղար)				7,64	8,00						
Կիրառական արվեստ											
<i>Կուրս ԿԱ I</i>											
1	Գծագրական երկրաչափություն.-	9	3	2,89	3,67	1					
2	Պլաստիկ անատոմիա -1-	9	3	3,11	2,67			1			
3	Նյութերի տեխնոլոգիա-1-	9	3	5,89	7,00	1		7	3		
<i>Կուրս ԿԱ II</i>											
1	Նյութերի տեխնոլոգիա-3	9	2	4,00	4,00	2		3			
<i>Կուրս ԿԱ III</i>											
1	Երիֆտ-	17	4	7,29	8,25	1		12	3	4	1
2	Նյութերի տեխնոլոգիա -5-	17	4	5,41	7,75			6	3	1	1
<i>Կուրս ԿԱ IV</i>											
1	Նյութերի տեխնոլոգիա -7-	31	5	5,94	8,00	2		17	3	4	2
2	Պլաստիկ անատոմիա- հեռանկար.	31	5	5,00	8,80	3		9	1	7	4
ԸՆԴՀԱՄԵՆՆԵՐ՝ Կիրառական արվեստ				5,29	6,76						
ԸՆԴՀԱՄԵՆՆԵՐ Ֆակուլտետում՝				5,62	6,97						

Դեկան՝

Ա.Շ.Սարգսյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Կիրառական արվեստի ֆակուլտետ

2015-2016 ուս.տարի I կիսամյակ

Առաքարի մ ու թ յ ու ն ը

ը ն ք . ք Ն Ն . 1

27.10.2015

N:	Առարկայի անունը	Ուս.քանակ		Միջին գնահ.		0-ների քանակ		2,3-ների քան.		4-երի քանակ	
		ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.
Դիզայն (գեղար)											
Կուրս Դ I											
1	Կոմպոզիցիայի հիմունքներ -1	11	3	3,36	4,00	1		3		7	3
2	Ունամակարչություն -1-	11	3	3,27	4,00			7		4	3
3	Չժազրական երկրաչափություն-	11	3	2,09	2,67	1		10	3		
4	Չժանկարչություն -1-	11	3	2,18	2,67			10	3		
Կուրս Դ II											
1	Կոմպոզիցիա-3-	11	3	2,73	3,33	1		6	1	4	2
2	Չժանկարչություն-3-	11	3	2,36	2,67			11	3		
3	Ունամակարչություն-3	11	3	2,45	3,67	1		6	1	3	2
4	Բիռնիկա	11	3	3,55	3,67			4	1	7	2
ԸՆդամենը՝ Դիզայն (գեղար)				2,75	3,33						
Կիրառական արվեստ											
Կուրս ԿԱ I											
1	Ունամակարչություն -1-	9	3	2,56	3,33			7	1	2	2
2	Չժանկարչություն -1-	9	3	2,56	3,33			7	1	2	2
3	Կոմպոզիցի -1-	9	3	3,00	3,33			5	2	3	1
Կուրս ԿԱ II											
1	Կոմպոզիցիա-3-	9	2	2,56	2,50			6	2	2	
2	Քանդակագործություն-1-	9	2	3,11	4,00			6		3	2
3	Չժանկարչություն-3-	9	2	3,11	3,50			7	1	2	1
4	Ունամակարչություն-3-	9	2	3,11	3,50			7	1	2	1
Կուրս ԿԱ III											
1	Չնագ. և հիֆեյթ. արտ.արվ.պ.-	17	4	1,59	2,25	2		9	3		
2	Չժանկարչություն-5-	17	4	2,53	3,75			12	1	3	3
3	Ունամակարչություն-5	17	4	3,18	4,00			11		6	4
4	Քանդակագործություն -3-	17	4	3,00	3,75			12	1	5	3
Կուրս ԿԱ IV											
1	XX դարերի արտ.արվեստի պատմ-	31	5	2,26	3,60	1		18	2	5	3
2	XX դարերի խաչ.արվեստի պատմ	31	5	2,29	3,60	6		11	1	10	4
3	Չժանկարչություն-7-	31	5	2,87	4,00	1		20		10	5
4	Գուռանկարչություն-7-	31	5	2,74	3,80	3		15	1	11	4
ԸՆդամենը՝ Կիրառական արվեստ				2,63	3,55						
ԸՆդամենը ֆակուլտետում՝				2,66	3,48						

Դեկան՝

Ա.Շ.Սարգսյան